ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 110 - Ա
04 հուլիսի 2013 թ

ՄԱՐԶԻ ԾՈՎԱԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 77^1, 77^2, և 77^3 հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Ծովազարդ համայնքի ղեկավարին՝

   1) Ձեռնարկել կոնկրետ միջոցներ հարկերը ամբողջությամբ գանձելու ուղղությամբ ապահովել լ«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի պահանջը:
   2) Դրամարկղային գործարքները և հաշվապահական հաշվառումը իրականացնել «Դրամարկղայի գործառնությունների մասին» ՀՀ օրենքների 5-րդ հոդվածի և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:
   3) Վարձավճարների ապառքներ ունեցող վարձակալներին ուղարկել ծանուցագրեր վարձավճարների ապառքները գանձելու համար:
   4) Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օգտագործումը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ-ի ապրիլի 12-ի N 286 և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ-ի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշումների պահանջներին:
   5) Հաստատել ներհամայնքային առևտրի կանոնները և ուղարկել պետական փորձաքննության:
   6) Առևտրի և ծառայությունների բնագավառում հսկողությունն իրականացնել "Առևտրի և ծառայությունների մասին" ՀՀ օրենքի 17^1 հոդվածի պահանջներին համապատասխան:
   7) Ապահովել նախորդ տարիների տեղական տուրքերի ապառքների հավաքագրումը:

8) Համայնքի ղեկավարի կողմից առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության արդյունքների վերաբերյալ մարզպետարան ներկայացնել հաշվետվություն "Առևտրի և ծառայությունների մասին" ՀՀ օրենքի 17 հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան:
9) Համայնքի ավագանու նիստերը հրավիրել Հայաստանի Հանրապետության ,,տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով սահմանված ժամկետներում:
10) Ղեկավարվելով ,,տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի հանրապետության օերնքի 32-րդ հոդվածի 21 կետի պահանջով գյուղապետի կողմից ընդունվող անհատական իրավական ակտերը 2-օրյա ժամկետում տրամադրել համայնքի ավագանու անդամներին և փակցնել բնակչության համար տեսանելի վայրում:
11) Ղեկավարվելով ,,տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով հաստատել աշխատակազմի կանոնադրությունը /նոր խմբագրությամբ/:
12) Ինչպես նաև հաստատել համայնքային բյուջետային հիմնարկների ու ՀՈԱԿ-ի կանոնադրությունները /,,մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ին նոր խմբագրությամբ/:
13) Վարել համայնքի ղեկավարի, ավագանու և համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերի 2010-2012թթ. հաշվառման մատյանները:

2. Սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հուլիսի 31-ը:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ